I

ՀԱՅՈՑ ՀԻՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐԸ

ՎԱՆԸ ՀՆԱԴԱՐՈՒՄ
(Տուրուշպա, Տուշպա, Տուսպ)

ՍԻՄՈՆ ՀՄԱՅԱԿՅԱՆ, ԵՐՎԱՆԴ ԳՐԵԿՅԱՆ

«Տեր իմ, Երկնային Աստված Արև, մարդկության հովիվ:
Ծովից ես դու բարձրանում վեր, երկնային աստված Արև…»*:
(Հատված հեթիթական հիմներգից)

Հին հեթիթների հավատալիքներում (մի ժողովուրդ, որը գերիշխում էր Փոքր Ասիայում Ք. ա. XVIII–XIII դարերում) Արեգակը ծագում էր «Արևելյան ծովից»: Հետազոտողներից ոմանք «Արևելյան ծով» համարում են Վանա լիճը[1]*: Այն մասին, որ առասպելական այդ ծովի իրական կերպավորումը կարող էր լինել Վանա լիճը, վկայում են նաև հայկական ավանդությունները: Դրանց համաձայն՝ Արեգակն աստիճանաբար մանկանալով՝ մայր է մտնում Վանա լճում, որտեղ ապրում էր նրա մայրը և մանկացած Արեգակին կերակրում կրծքով: Առավոտյան արդեն պատանի Արեգակն իր տասներկու թիկնապահների և Գաբրիել հրեշտակապետի օգնությամբ հաղթում է իր ճանապարհին կանգնած հրեշներին ու կրկին ծագում*[2]*:*

Թերևս այս հին պատկերացումներով էր պայմանավորված այն հանգամանքը, որ Վանա լճի ավազանի գլխավոր քաղաքը՝ Վանը, նվիրված էր Արևի աստծուն:

* * *

«(Ասորեստանի թագուհի Շամիրամը – Ս. Հ., Ե. Գ.*) … շատ տեղերով անցնելով գալիս հասնում է աղի ծովակի եզերքը արևելյան կողմից: Տեսնում է ծովի ափին մի երկայնաձև բլուր, որ երկայնակի ձգվում էր դեպի արևմուտք՝ հյուսիսային կողմում մի փոքր թեքությամբ, իսկ հարավային կողմից ուղղահայաց դեպի երկինք բարձրացած մի կանգուն ու անթեք քարաժայռ կար: Սրանից դեպի հարավ հեռուն տարածվում էր մի դաշտանման երկայնաձև հովիտ, որ լեռան արևելյան կողմից իջնում էր ծովի ափը՝ ընդարձակ ու գեղեցիկ ձորի տեսքով: Այս տեղի վրա աչք դնելով՝ Շամիրամը… քիչ տարիներից հետո*

---

* В. В. И в а н о в. Луна, упавшая с неба. М., 1977, с. 105.

[1] В. В. И в а н о в. Хеттский язык.– Древние языки Малой Азии (сб. ст. под. ред. Дьяконова И. М., Иванова В. В.). М., 1980, с. 136.

[2] *Գ. Սրվանձտյանց. Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ, Կոստանդնուպոլիս, 1874, էջ 107-112, Գ. Սրվանձտյանց. Համով հոտով.– Գ. Սրվանձտյանց, Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 490-495,* С. Г. А м а я к я н. Культ солнца у земледельческо-скотоводческих общин Закавказья и Урартское божество Шивини.– В кн. Культурный прогресс в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1982, с. 141–143; *Ս. Գ. Հ մ ա յ ա կ յ ա ն. Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 44-46:*

գլուխ է բերում հրաշալի շինվածքը՝ ամուր պարիսպներով ու պղնձից շինած դռներով, քաղաքի մեջ շինում է նաև բազմաթիվ ընտիր ապարանքներ. կրկնահարկ և եռահարկ, զարդարված տեսակ - տեսակ գույնզգույն քարերով և ամեն մեկում պատուհաններ ըստ հարմարության: Քաղաքի կողմերն էլ որոշում է գեղեցկագույն և ընդարձակ փողոցներով: Շինում է նաև չքնաղ և զարմանալու արժանի բաղնիքներ՝ համապատասխան քաղաքի դիրքին և պետքերին: … Քաղաքի ամբողջ արևելյան, հյուսիսային և հարավային կողմերը զարդարում է դաստակերտներով, վարսագեղ սաղարթախիտ ծառերով՝ զանազանակերպ պտուղներով ու տերևներով, և այնտեղ տնկում է բազմաթիվ առատաբեր և գինեբեր այգիներ: Պարսպած քաղաքը ամեն կերպ հոյակապ ու հռչակավոր է դարձնում, մեջը բնակեցնում է մարդկանց անթիվ բազմություն:

Իսկ քաղաքի «Վերի ծայրը» և այնտեղի հրաշալի շինվածքները մարդկանց շատերին անհասկանալի են մնում, և պատմելու հնարավորություն չկա: Այդտեղ գագաթի շուրջը պարիսպ քաշելով ներսը շինում է դժվար մտնելու և դժվար դուրս գալու ինչ-որ ծածուկ և ահռելի արքայանիստ շինվածքներ…

Իսկ քարաժայռի՝ դեպի արեգակը դարձած կողմը, որտեղ այժմ և ոչ մի գիծ կարող է մարդ գծել երկաթով այսպիսի կարծր քարի մեջ զանազան տաճարներ, սենյակներ, ննջարաններ, գանձարաններ և երկար վիհեր՝ հայտնի չէ ինչ բանի համար, հրաշակերտեց: Իսկ քարաժայռի բոլոր երեսը հարթելով, ինչպես գրչով հարթում են մեղրամոմը, վրան շատ գրեր գրել տվեց, որոնց տեսքը միայն բոլորին զարմացնում է և ոչ միայն այստեղ, այլև Հայոց աշխարհում, շատ տեղերում արձաններ կանգնեցրեց, և նույն գրերով իր մասին ինչ-որ հիշատակ հրամայեց գրել և շատ տեղերում նույն գրով սահմաններ էր հաստատում»[3]*:*

Այսպես էր պատկերացնում Վանը ֆրանսիացի նկարիչ Ժակ-Հիպոլիտ Վանդերբուրխը
(XIX դ. սկիզբ, գրավյուր)[4]

---

[3] *Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի. Հայոց Պատմություն, աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Երևան, 1981, գիրք առաջին, գլուխ ԺԶ:*

[4] *Հոդվածում զետեղված նկարները վերցրել ենք* ՝ V. S e v i n. Urartu devleti.– Arkeoatlas, № 4, 2005 (*նկ.* 1, 6-7, 10, 12-13); Н. М а р р, И. О р б е л и. Археологическая экспедиция 1916 года в Ван. Петербург, 1922 (*նկ.* 2); V. S e v i n. Eski Anadolu ve Trakya. İstanbul, 2003 (*նկ.* 3-5, 8-9); O. B e l l i. Catalogue of the Exhibition Urartu: War and Aesthetics, İstanbul, 2004 (*նկ.* 11) *հրատարակություններից:*

Սա Վանի նկարագրությունն է՝ տրված V դարի հայ պատմիչ Մովսես Խորենացու կողմից: Վանի հիմնադրումը, Վանում իր տեսած հնությունները, ինչպես նաև Վանը սնուցող հոչակավոր ջրանցքը պատմահայրը թվագրում էր ասորեստանյան Շամիրամ թագուհու գահակալության տարիներով և վերագրում նրա շինարարական գործունեությանը:

Այս տեղեկությունները Խորենացին քաղել էր, թերևս, դեռ գոյություն ունեցող հին ավանդություններից, և պատահական չէ, որ Վան քաղաքը միջին դարերում կոչվում էր ոչ միայն Տոսպ, այլև՝ Շամիրամի քաղաք, Շամիրամակերտ, Շամիրամի ամրոց, Վանը սնուցող ջրանցքը՝ Շամիրամի առու[5]*:*

Շամիրամի (հուն. Սեմիրամիս) մասին առասպելները հայտնի էին ինչպես Մերձավոր Արևելքում, այնպես էլ Հայաստանում, իսկ Շամիրամը իրական հերոսուհի էր՝ Շամմուրամատ թագուհին (Ք. ա. 811–805 թթ.)՝ Ասորեստանի նշանավոր արքա Շուլմանու-աշարեդ (Սալմանասար) III-ի թոռնուհին և Շամշի-Ադադ V-ի կինը:

Վաղ միջնադարում՝ և ոչ միայն հայ հեղինակների մոտ, ասելով «Շամիրամի կառուցած» (ինչպես, օրինակ, Շամիրամի «Կախովի այգիները»), նկատի ունեին այն հուշարձանները, որոնց մենք հիմա անվանում ենք հին արևելյան:

* * *

Երբ Մովսես Խորենացու գիրքը թարգմանվեց եվրոպական լեզուներով, շատերը չհավատացին նրա պատմությանը: Եվ ահա, պատմիչի տեղեկությունները ստուգելու նպատակով 1827 թ. Ֆրանսիայի «Ասիական ընկերությունը» Սեն Մարտենի նախաձեռնությամբ Վան է գործուղում հեսսենցի գիտնական Ֆր. Շուլցին: Նրան հաջողվում է գալ Վան, մտնել ամրոց, որն այդ ժամանակ պաշտպանում էր մի ծեր ասկյար ու մի արջ, և ուսումնասիրել Խորենացու նկարագրած հուշարձանները: Շուլցը հիանալի պատճենեց Վանի սեպագիր արձանագրությունները, նկարագրեց Վանա ժայռը: Գիտության այս մեծ երախտավորի աշխատանքն ընդհատվեց 1829 թվականին Ջուլամերկի լեռներում, որտեղ նա սպանվեց մի քուրդ ցեղապետի կողմից:

*Բարեբախտաբար, Ֆր. Շուլցի ուսումնասիրություններն անտեղի չէին: Նրա աշխատանքը հրատարակվեց 1840 թ. ֆրանսիական «*Journal Asiatique*» հանդեսի էջերում*[6]*: Այս հրատարակության մեջ ընդգրկված են 42 սեպագիր արձանագրությունների գրչագրերը և մանրամասն նկարագրված են Խորենացու հիշատակած Վանա ժայռի ձեռակերտ քարայրները: Մինչ այդ՝ 1839 թ., Վան էր այցելել ֆրանսիացի հայտնի հնագետ Շ. Ֆ. Մ. Թեսիեն:*

---

[5] *Թ. Խ. Հ ա կ ո բ յ ա ն, Ս տ. Մ ե լ ի ք - Բ ա խ շ յ ա ն, Հ. Խ. Բ ա ր ս ե ղ յ ա ն. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Երևան, 1998, էջ 68-70:*

[6] F. E. S c h u l z. Sur le lac de Van et ses environs (Envoyé à Paris le 8 juin 1828).– Journal Asiatique, Troisième série, t. 9, 1840, p. 257–323.

1850 թ. Վան այցելեց և Վանի նահանգի գլխավոր ճարտարապետ Նիկողոսի հետ Վանա բերդը շրջեց առաջավորասիական հնագիտության հիմնադիրը համարվող, Ասորեստանի մայրաքաղաքներից Կալխուում (Նիմրուդ) և Նինվեում (Քույունջիք) պեղումներ իրականացրած, իսկ հետագայում Օսմանյան կայսրությունում Բրիտանական թագավորության դեսպան, անգլիացի Օ. Հ. Լեյարդը:



Ն. Մառի և Հ. Օրբելու արշավախումբը Վանում 1916 թ.

1879–1880 թթ. Վան քաղաքի շրջակայքի հուշարձաններն ուսումնասիրվեցին Լեյարդի աշակերտի՝ Հ. Ռասսամի, նրա գործընկերներ ամերիկացի միսիոներ, դոկտոր Դ. Ռեյնոլդսի և Վանի այն ժամանակվա հյուպատոսի օգնական, հրետանու հարյուրապետ Ե. Կլեյթոնի կողմից:

1898–1899 թթ. Թուրքահայաստանի հուշարձանների ուսումնասիրությունը Պրուսիայի կայսերական ակադեմիայի անունից շարունակեցին այդ նպատակով Վան գործուղված Կ. Ֆ. Լեման-Հաուպտը և Վ. Բելքը: Վանի ժայռափոր կառույցները մանրամասն չափագրվեցին ռուսական բանակի սպա Ա. Վ. Սիվկովի կողմից[7]: Դրան հետևեցին Ս. Տեր-Ավետիսյանի և Ա. Կազնակովի, ապա՝ Հ. Օրբելու և Ն. Մառի պեղումները Վանում՝ 1915–1916 թթ.[8], որի արդյունքը պաշտամունքային մի հարթակի և Սարդուրի II արքայի տարեգրությունների բացահայտումն էր լինելու:

Աստիճանաբար, անցյալի մշուշապատ քողի տակից սկսեցին երևալ խորտակված քաղաքակրթության բարձր կայմերը:

* * *

Սկսած Ք. ա. X դ. վերջերից՝ ասորեստանյան սեպագիր աղբյուրներում վերստին հանդես են գալիս Հայկական լեռնաշխարհի երկրները՝ Նաիրի երկրներ ընդհանրական անվանումով: Աստիճանաբար այս տերմինն իր տեղը զիջում է Լեռնաշխարհի պետական կազմավորումների շարքում առաջ մղված առավել հզոր ուժերին, որոնց թվում էր Ուրարտու (Ուրու(ա)տրու/ի) պետությունը:

Ուրարտուն ծնունդ էր առել Վանա լճի ավազանում և, որպես ձևավորված պետական կազմավորում, թերևս, գոյություն ուներ արդեն ասորեստանյան արքա Աշշուր-նաձիր-ապալ II-ի իշխանության ժամանակաշրջանում (Ք. ա. 884–858 թթ.)[9]: Այս երկրի առաջին մայրաքաղաքը Արծաշկուն էր, թերևս, Արճեշը՝

---

[7] *Տե՛ս* Б. Б. П и о т р о в с к и й. Ванское царство (Урарту). М., 1959, с. 7 и далее; M. T a n e r T a r h a n. Tuşpa-Van Kalesi.– Arkeoatlas, № 4, 2005, s. 127–128.

[8] Н. М а р р, И. О р б е л и. *Նշվ. աշխ.:*

[9] *Հարցի պարզաբանումը պայմանավորված է նաև՝* A. L i v i n g s t o n e. Court Poetry and Literary Miscellanea.– State Archives of Assyria, vol. III. Helsinki, 1989, № 17; A. K. G r a y s o n. Assyrian

Վանա լճից հյուսիս, մեզ հայտնի առաջին տիրակալը՝ Արամու ուրարտացին (Ք. ա. շուրջ 860–840-ական թվականներ):

Ասորեստանյան արքաներից Սալմանասար III-ը (Ք. ա. 858–824 թթ.) Արամուի դեմ ձեռնարկում է մի շարք արշավանքներ՝ Ք. ա. 858, 856, 844 թվականներին: Դրանց նշանակությունն այնքան մեծ էր, հաղթանակները այնքան կենսական, որ ասորեստանյան արքային նվիրել էին մի ամբողջ հերոսապատում՝ եզակի մի երևույթ ասորեստանյան իրականության մեջ: Ահա այս տողերն են գրել ասորեստանյան դպիրները՝ փառաբանելով Սալմանասար III-ի արշավանքը դեպի Ուրարտու.

«Ուրեմն, ես գնում եմ պատերազմելու ուրարտացիների հետ,
Ես գնում եմ տեսնելու՝ արդյոք այդ երկիրը ջուր ունի՞, թե՝ ոչ»,– այսպես նա խոսեց:
«… թող սրերը հատու լինեն, [որ ես դրեցի] ձեր ձեռքերի մեջ,
[Ես դրեցի] սրածայր նետեր ձեր կապարճների մեջ,
Ես [պատեցի] ձիերը երկաթե զրահներով,
Չխաբվե՛ք ձեր հոծ շարքերին,
[Չերկնչե՛ք] ուրարտացի ստրուկի զենքից,
Աշշուր աստվածն ինձ վստահեց՝ [բռնելու Ուրարտու] տանող ճանապարհը»:
Ասորեստանցիները բղավեցին… «Արշավի՛ր, օ արքաների տեր, խորտակի՛ր [թշնամիներին Աշշուրի]…»[10]:

Արամուն Սալմանասար III-ի դեմ մղած համառ պայքարում թեև կարողացավ պահպանել իր երկրի անկախությունը, սակայն կասեցվեց նրա երկրի հետագա վերելքը: Ասորեստանյան արշավանքները դեպի Վանա լճի ավազան պատճառ դարձան ուժերի հարաբերակցության փոփոխմանը: Ի հակակշիռ Արամուի պետության՝ Ասորեստանը սկսեց հովանավորել Լեռնաշխարհի այլ ուժերի, գերիշխանությունն այստեղ, ամենայն հավանականությամբ, անցավ Տու(ռու)շպային:

* * *

«Ես նվաճեցի ամուր քաղաքները, ես քանդեցի ամրոցները,
… աշխարհի (չորս) կողմերի տիրոջ փայլը տապալեց նրանց,
Նրանք լքեցին իրենց քաղաքները և փախան դեպի անմատչելի լեռները,
… ինը օր շարունակ ես տանում էի նրա պալատի հարստությունը, ես այրեցի նրա բազում բնակավայրերը,
Ես քշեցի նրա երկրի սպասուհիներին իմ զորքի առջև…,

Rulers of the Early First Millennium B. C. (858–745 B. C.).– The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods, vol. III. Toronto, 1996, № A.O.102.17 *արձանագրությունով, եթե հաստատվի դրա պատկանելությունը Աշշուր-նածիր-ապալ II-ին: Քննարկումները տե՛ս* W. G. L a m b e r t. The Sultantepe Tablets VIII. Shalmaneser in Ararat.– Anatolian Studies, vol. 11, 1961, p. 143-144; *Հմմտ.* J. E. R e a d e. Shalmaneser or Ashurnasirpal in Ararat?.– State Archives of Assyria Bulletin, vol. III, Issue 2, 1989, p. 93–97; A. K. G r a y s o n. *Նշվ. աշխ., էջ 84-85:*

[10] A. K. G r a y s o n. *Նշվ. աշխ.,* № A. O. 102.17, *տող* 14-28:

Ընդհուպ մինչև Նաիրի երկրի <ծովը>, դեպի Գիլզանու երկիր, ես իջա,
Ձիեր՝ որպես հարկ ես ստացա Տիկկու (և) Խուբուշկիա քաղաքներում,
Հարկի մյուս մասը ես ստացա Տուրուշպա քաղաքում»[11]:

«Տուրուշպա քաղաքում». *սա Վան քաղաքի մասին առաջին հիշատակությունն է ասորեստանյան սեպագիր աղբյուրներում իր հնագույն անվանաձևով, որից և հին հունարեն Թոսպիտիս ու Թոսպիա* (Θωσπίτις, Θωσπία) *և հին հայերեն Տոսպ կամ Տոզբ անունները:*

Սարդուրի I-ի կառուցած շինությունը

Տուրուշպան (ուրարտերեն՝ Տուշպա) Հայկական լեռնաշխարհի տասնյակ պետական կազմավորումներից մեկն էր: Որպես բնակատեղի՝ այն գոյություն ուներ սկսած Ք. ա. III հազարամյակից՝ վաղ բրոնզի դարից[12], և դեռևս հնագույն շրջանից հյուսիսային Միջագետքի հետ ուներ սերտ կապեր: Դա առավել ցայտուն դրսևորվեց Սալմանասարի արշավանքների ընթացքում, երբ քաղաք - պետությունը ոչ միայն հարկեր մատուցեց ասորեստանյան արքային, այլև սկսեց վայելել նրա հովանավորությունը: Տուշպան հայտնվեց ասորեստանյան տերության ազդեցության գոտում, աճեց ծանոթությունը միջագետքյան մշակույթի

[11] *Նույն տեղում, տող* 39-57:

[12] M. T a n e r T a r h a n. Recent Research at the Urartian Capital Tushpa.– Tel Aviv, vol. 21, №1, 1994, p. 22; V. S e v i n. Eski Anadolu ve Trakya (Başlangıcından Pers Egemenliğine Kadar). İstanbul, 2003, s. 199.

հետ: Պատահական չէ, որ տեղի կառավարիչներն առաջինն էին, որ ներմուծեցին ասորեստանյան սեպաձև գրահամակարգը[13]:

Տուշպայի պետությունն ամենամեծ վերելքն ապրեց տեղի արքայատան ներկայացուցիչներից Լութիպրիի որդի Սարդուրիի (ասսուր. Սեդուրի) իշխանության տարիներին (Ք. ա. մոտ 840–830-ական թվականներ): Հայտնի է, որ վերջինս Տուշպայում իրականացրել է շինարարական զգալի աշխատանքներ՝ դրա համար շինանյութ ծառայող քարը բերելով Ալնիունի քաղաքի (Վանից տասնյոթ կմ հարավ գտնվող Արտամետը) քարհանքերից[14]: Ահա թե ինչ է ասվում Սարդուրիի թողած ասսուրերեն արձանագրություններում.

«Սարդուրիի արձանագրությունը՝ որդու Լութիպրիի, մեծ արքայի, հզոր արքայի, տիեզերքի արքայի. Նաիրիի արքայի, արքայի, որին հավասարը չկա, զարմանահրաշ հովվի, (որ) չի վախենում կռվից, արքայի, որ ենթարկում է անհնազանդներին: Սարդուրին՝ որդին Լութիպրիի, արքան (է) արքաների, որը բոլոր արքաներից հարկ վերցրեց: Սարդուրին՝ որդին Լութիպրիի, ասում է այսպես.– Ես քարերն այս Ալնիունու (քաղաքից) բերեցի, ես պարիսպն այս կառուցեցի»[15]:

Սարդուրիի՝ մեզ հասած թվով վեց արձանագրությունները գտնվել են Վանա ժայռի ստորոտին կառուցված մի ուղղանկյունաձև կառույցի պատերին: Այն Վանից մեզ հասած ամենահին թվագրվող կառույցն է և պաշտպանում էր ամրոցի արևմտյան հատվածը՝ ժայռի ստորոտից բխող քաղցրահամ աղբյուրներով հանդերձ: Ի դեպ, գերմանացի արևելագետ Կ. Ֆ. Լեման-Հաուպտի կողմից «Սարդուրիի բերդ» անվանված այդ կառույցի քարերից յուրաքանչյուրը կշռում է 8–10 տոննա:

Սարդուրիի տիտղոսաշարը, որը կրկնում էր ասորեստանյան արքաների տիտղոսաշարը և ընդգծում իր հզորությունը, կարծես մարտահրավեր էր՝ նետված Ասորեստանին, և Ասորեստանն ընդունեց այդ մարտահրավերը: Նույն՝ Սալմանասար III-ի հրամանով Ք. ա. 830 թ. ասորեստանյան զորքերը գլխավոր զորահրամանատար Դայյան-Աշշուրի առաջնորդությամբ արշավեցին Հայկական լեռնաշխարհ՝ դեպի Վանա լիճ, դեպի Տուշպա: Վանա լճից հարավ - արևմուտք՝ Արածանիի վտակ Մեղրագետի (այժմ՝ Կարասու) վերին հոսանքների շրջանում, ասորեստանյան բանակն ընդհարվեց Սարդուրիի զորքերի հետ: Ճակատամարտում Տուշպայի արքան պարտվեց և ստիպված էր նահանջել: Հետապնդելով նրան՝ Դայյան-Աշշուրը գրավեց Ունգումունի քաղաքն իր շրջակա բնակավայրերով, որոնք հիմնահատակ ավերվեցին: Սակայն Դայյան-Աշշուրը

[13] G. W i l h e l m. Urartu als Region der Keilschrift-Kultur.– W. H a a s (Hrsg.). Das Reich Urartu: Ein altorientalischer Staat im 1. Jahrtausend v. Chr., Xenia 17, Kostanz, 1986, S. 95 ff.

[14] O. B e l l i. Alniunu kenti ve taş atölyesinin keşfi.– Anadolu Araştırmaları, Cilt VIII, 1980. İstanbul, 1982, S. 120 ff. O. B e l l i, A. M. D i n ç o l. Hazine Piri kapısı ve aşağı Zivistan taş ocakları.– Anadolu Araştırmaları, Cilt VIII. İstanbul, 1982, s. 170–171.

[15] Н. В. А р у т ю н я н. Корпус урартских клинообразных надписей. Ереван. 2001, № 1—6.

չփորձեց կամ չկարողացավ խորանալ Սարդուրիի տարածքներում և հետ դարձավ[16]:

Սալմանասարի այս արշավանքը հանգեցրեց Հայկական լեռնաշխարհում քաղաքական կարճատև հավասարակշռության վերահաստատմանը: Ասորեստանյան մշտական սպառնալիքը Վանի ավազանի երկրներին մղեց դաշնակցելու միմյանց հետ: Կազմվեց նաիրյան երկրների մի նոր միություն, որի շարքում էր նաև Բիայնիլի երկիրը՝ ի դեմս «Խալդի (աստծո) քաղաքի»:

Բիայնիլին իր ինքնուրույն ուղին սկսեց Ք. ա. մոտ 830-ականներին, երբ գահ բարձրացավ տեղի արքայատան ներկայացուցիչներից Իշպուինին՝ Սարդուրիի որդին: Վերջինս, հնարավոր է, Սալմանասար III-ի արձանագրություններից մեկում հիշատակված «ուրարտացի Սեդուրին»է ր՝ Տուշպայի արքան:

Իշպուինին կարողացավ իր շուրջը համախմբել նաիրյան երկրներին, միավորելով ուժերը՝ նա ձեռնարկեց նվաճողական առաջին արշավանքները դեպի Հայկական լեռնաշխարհի հյուսիս և հարավ - արևելք: Նրա վերելքը կասեցնելու՝ ասորեստանյան նոր արքա Շամշի - Ադադ V-ի փորձերը հանգեցրին միայն կարճատև հաջողության: Ասորեստանն այլևս ի զորու չէր լրջորեն սպառնալու Հայկական լեռնաշխարհի՝ իր հյուսիսային հարևաններին:

Իշպուինիի օրոք բիայնական պետությունը սկսեց իր կամքը թելադրել նաև նաիրյան իր երբեմնի դաշնակիցներին: Կարճ ժամանակամիջոցում նաիրյան դաշնությունը վերածվեց խիստ կենտրոնացված պետության՝ ուրարտախոս համայնքին առաջնորդող Իշպուինիի տան՝ բիայնացիների փոքրաթիվ վերնախավի գլխավորությամբ[17]: *Հավանաբար, հենց այս շրջանում Իշպուինին սկսեց հանդես գալ «Բիայնիլիի արքա, Շուրիլիի («կայսրության») արքա» տիտղոսով՝ ցույց տալով իր գերիշխանությունը նաիրյան երկրների շարքում*[18]: *Կենտրոնացված պետություն ստեղծելու նրա քաղաքականությունը չէր ենթադրում անգամ որևէ երկրի կիսանկախ գոյություն, նաիրյան երբեմնի դաշնակից երկրները մեկը մյուսի ետևից նվաճվում էին, դրանց տարածքում կառուցվում էին ամրոցներ, հաստատվում՝ կայազորներ, իսկ բնակչությանը, ամենայն հավանականությամբ, պարտադրվում էր ընդունել բիայնացիների գերագույն աստծո՝ Խալդիի, և ուրարտական հանրության էթնիկական աստվածների պաշտամունքը: Նրա այս քաղաքականությանը շուտով զոհ գնացին Արծունիունի, Մուշունի, Ուիշինի քաղաքները: Հաջորդը լինելու էր Տուշպան:*

---

[16] A. K. G r a y s o n. *Նշվ. աշխ., №* A. O. 102.16, *տող* 228´-244´, № A.O.102.14, *տող* 141b-146a:

[17] *Ա. Պ ե տ ր ո ս յ ա ն. Ուրարտական գլխավոր աստվածների եռյակը և պետության իշխող վերնախավի ծագման խնդիրը (Կ. Ֆ. Լեման-Հաուպտի ծննդյան 140-ամյակի առթիվ).– ՊԲՀ, 2002, № 2, էջ 267:*

[18] A. M. D i n ç o l, B. D i n ç o l. Die neuen Inschriften und Beschrifteten Bronzefunde aus den Ausgrabungen von den urartäischen Burgen von Anzaf.– Th. P. J. van den Hout, J. de Roos (eds.), Studio Historiae Ardens, Ancient Near Eastern Studies Presented to Ph. H. J. Houwink ten Cate. İstanbul, 1995, s. 29, Tab. 4a(b).

* * *

Գուցե կարելի էր զարմանալ, թե ինչու Իշպուինիի՝ վերը նկարագրված այս բուռն գործունեության առաջին վկայություններն ամենևին չեն կապվում Տուշպայի հետ: Օրինակ՝ Իշպուինին սկզբնապես չէր կրում ուրարտական արքաների տիտղոսաշարերի անբաժան՝ «Տուշպա քաղաքի տեր» տիտղոսը, իսկ Իշպուինիի՝ Տուշպայից հայտնի միակ արձանագրությունը կազմվել է նրա կառավարման ուշ շրջանում՝ իր՝ Իշպուինիի, նրա որդու՝ Մենուայի, և թոռան՝ Ինուշպուայի անունից[19]: Մինչդեռ Իշպուինիից մեզ են հասել մի քանի տասնյակ տարաբնույթ արձանագրություններ: Ի դեպ, այդ արձանագրությունը վերաբերում էր Տուշպա քաղաքում բիայնացիների գլխավոր՝ Խալդի աստծո առաջին տաճարների կառուցմանը, ինչը կարող է վկայել, որ տուշպացիներին խորթ էր Խալդի աստծո պաշտամունքը, որը և ներդրվել էր:

Սրան կարող է լինել մեկ բացատրություն. բիայնական պետության մայրաքաղաքը սկզբնապես Տուշպան չէր և այն այդպիսին դարձավ Իշպուինիի գահակալության ուշ շրջանում, ինչ-որ մի ժամանակ նրա և որդու՝ Մենուայի հետ կառավարման ընթացքում: Առայժմ դժվար է ասել՝ արդյոք դա ռազմական նվաճման արդյունք էր, թե Տուշպան խաղաղ ճանաչեց բիայնացիների իշխանությունը՝ փորձելով իր համար ապահովել առավելագույնը, ինչը կարող էր տալ բիայնական օրեցօր հզորացող պետությունը:

Վանա ամուր ժայռին ապավինած Տուշպան՝ արևի աստծո պաշտամունքի այս խոշորագույն կենտրոնը, ճանաչվեց բիայնական պետության նոր մայրաքաղաքը: Տուշպայում ներդրվեց Խալդի աստծո պաշտամունքը[20]: Շիվինին և նրա կինը՝ Տուշպուեա դիցուհին (հմմտ. Տուշպա անվան հետ), իրենց բարձր դիրքը զբաղեցրեցին Բիայնիլիի տերունական դիցարանում: Այն արձանագրվեց Վանից ոչ հեռու՝ ժայռերին փորված «Մհերի դռան» արձանագրության մեջ: Այստեղ՝ Իշպուինիի արքայական տիտղոսաշարին արդեն հավելվել էր «Տուշպա քաղաքի տեր» տիտղոսը, որն այսուհետ կրելու էին բիայնական արքայատան բոլոր տիրակալները՝ ընդհուպ մինչև տերության անկումը:

Դեպի նոր մայրաքաղաք տանող ճանապարհների վրա Իշպուինին կառուցեց մի քանի հզոր ամրոցներ, այդ թվում՝ Քալեջիքը, Ներքին Անձավը և Զիվիստանը:

Իշպուինին կառավարեց մինչև խոր ծերություն՝ իր կյանքի վերջում հրաժարվելով գահից հօգուտ Մենուայի: Իշպուինիի վարած քաղաքականությունը նախանշեց մի ուղի, որի հաջող ավարտը Հին Առաջավոր Ասիայի խոշորագույն ուժերից մեկի՝ ուրարտական տերության ծնունդն էր լինելու:

---

[19] Н. В. А р у т ю н я н. *Նշվ. աշխ., № 20:*

[20] M. S a l v i n i. La formation de l'état urartéen.– Acta Anatolica E. Laroche oblata. Colloque anatolien, Paris, 1-5 juillet 1985, Louvain-Paris.– Hethitica, t. 8, p. 405; *Ն ո ւ յ ն ի՝* Le panthéon de l'Urartu et le fondement de l'état.– Studi epigrafici e linguistici sul Vicino Oriente antico, vol. 6, 1989, p. 79-89.

* * *

Վանի արքաների իշխանությունը լեռնաշխարհում հիմնվում էր ծայրագավառները կենտրոնին կապող ճանապարհների մոտ կառուցված քաղաքների վրա: Դրանցից որոշները արքայանիստ էին՝ խոշոր պալատով, տաճարներով, բնակելի հարկաբաժիններով, հյուրասրահներով, որոնք երբեմն հիշեցնում էին հետագայի աքեմենյան սյունազարդ ապադանաները, արհեստանոցներով, գինու հսկայական մառաններով և շտեմարաններով: Քաղաքներն ունեին բնակելի թաղամասեր, ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգ և այլն:

Վանի միջնաբերդի պարիսպները

Սարդուրի I-ից հետո Տուշպայում իրականացված շինարարական խոշորածավալ աշխատանքները կապվում են Մենուա, Արգիշթի I և Սարդուրի II արքաների անվան հետ: Դրանք տեղ գտան Վանա ժայռի վրա, ուր ընկած էր «Վերին քաղաքը» և վեր էր խոյանում քաղաքի միջնաբերդը:

Վանա ժայռն ունի 1,5 կմ երկարություն, 70–80 մ լայնություն և մինչև 100 մ բարձրություն: Հարավային կողմից ժայռը խիստ ուղղաձիգ է (մոտ 90 աստիճան) և անմատչելի՝ թշնամիների համար: Հյուսիսային կողմից բնականից ամուր բերդը շրջապատվել է ժայռի մեջ փորված հարթակների վրա բարձրացող ամուր պարիսպներով: Արևելքից և արևմուտքից ամրոցը լրացուցիչ ամրացված էր ժայռի մեջ փորված երկու խորը խանդակներով: Ժայռափոր աստիճաններով հնարավոր էր հասնել ստո-

րոտ՝ այստեղից բխող քաղցրահամ աղբյուրներին: Դրանցից ամենահայտնին կրում է «Հազար աստիճաններ» անունը:

Վանի միջնաբերդը զբաղեցնում է Վանա ժայռի ամենաբարձրադիր հատվածը և շրջապատված է հզոր պարիսպներով: Այստեղ է գտնվել քաղաքի հնագույն պալատն ու առաջին տաճարը, որին գիտական գրականության մեջ այժմ անվանում են «նախնիների պաշտամունքի տաճար»: Տաճարի մնացորդներն այստեղ հայտնաբերվեցին 1989–1991 թթ. իրականացված պեղումների արդյունքում[21]*: Այն երկսրահ մի կառույց է, որի տակ գտնվել են ժայռափոր արքայական դամբարաններ: Ենթադրաբար՝ դրանք պատկանել են Սարդուրի I-ին և նրա ընտանիքին: Հետագայում՝ օսմանյան դարաշրջանում, դամբարաններն օգտագործվել են իբրև զինանոց և պահեստ:*



Սարդուրի II-ի դամբարանը

Միջնաբերդի մերձավորությամբ են գտնվում ենթադրաբար Իշպուինիին և Մենուային պատկանող դամբարանները, միջնաբերդից դուրս, այն պաշտպանող արևելյան խանդակի մերձավորությամբ է գտնվում խիստ հանիդսավոր ճակատ ունեցող մեկ այլ դամբարան, որը, ենթադրաբար, պատկանում էր Սարդուրի II-ին: Այն բաղկացած է խոշոր սրահից և դրա հետ կապված երեք փոքր սենյակներից: Միջնաբերդը պաշտպանող արևմտյան խանդակից դուրս է գտնվում Արգիշթի I-ի դամբարանը, որը հայտնի է նաև«Խորխորյան անձավ» անունով: Դրա մուտքի մոտ՝ ժայռի մա կերեսին *են փորագրված ուրարտական այս նշանավոր արքայի տարեգրությունները* : *Ժայռափոր բոլոր կառույցներն ունեն որմնախորշեր, որոնց թիվը Սարդուրի II-ի դամբարանում հասնում է 78-ի, Արգիշթի I-ի դամբարանում՝ 34-ի: Դրանցում ժամանակին տեղադրվել են հուղարկավորության անոթներ, թաղման գույք: Սրանք արքայական դամբարաններ էին, իսկ բուն նեկրոպոլիսը գտնվում էր քաղաքից մի քանի կմ դեպի հյուսիս:*

[21] M. T a n e r T a r h a n. *Նշվ. աշխ., էջ 129-130:*

Ուրարտական ժայռափոր դամբարաններ

Վանա ժայռը և միջնաբերդի պարիսպները Վանա ժայռի համայնապատկերը

Վանա ժայռի Վերին քաղաքից դուրս՝ աստիճանաձև դարավանդների վրա է բարձրանում, այսպես կոչված, Նոր պալատը, որը, ենթադրվում է, կառուցել է Արգիշթի I-ը: Ուշագրավ է, որ պալատի պատերի հիմքերի մեջ տեղադրվել են բրոնզե նվիրատվական սկավառակներ, մի երևույթ, որ հետագայում լայն տարածում գտավ եկեղեցաշինության մեջ:

Վերին քաղաքի հյուսիսարևելյան մատույցների մոտ է բացվել «Գանձատուն» կոչվող բաց սրբավայրը: Սրբավայրն առանձնանում է երկու որմնախորշերով, որոնցից մեկում հայտնաբերվել է Սարդուրի II-ի տարեգրությունը պարունակող արձանագիր կոթող:

Վանա ժայռի երկարությամբ, նրա հարավային կողմում, գտնվում էր Ստորին կամ Արտաքին քաղաքը: 1980-ական թվականների վերջերին իրականացված պեղումները ցույց տվեցին, որ «Ստորին քաղաքը» ևս շրջապատված էր հզոր պարիսպներով[22]: Այստեղ բացվեցին մի քանի շինություններ, որոնցից առանձնանում է քարե հիմքերով 25 սենյակներից բաղկացած ընդարձակ բնակելի համալիրը: Նմանատիպ կառույց հայտնի է նաև Թեյշեբայինի քաղաքի (Կարմիր-բլուր) պեղումներից և, ամենայն հավանականությամբ, պատկանել են բիայնական վերնախավին: Համալիրի սենյակներում գտնված մեծ քանակությամբ ներկերի մնացորդները թույլ են տվել

[22] *Նույն տեղում, էջ 131:*

բնակարանն անվանել «Պալատական նկարչի տուն»[23]: Ուշագրավ է, որ նկարչի մի արհեստանոց է պեղվել վերջին տարիներին նաև Էրեբունիում[24]:

* * *

Տուշպա մայրաքաղաքը, եթե ոչ ի սկզբանե, ապա ուրարտական պետության գոյության ինչ-որ մի շրջանից սկսեց վայելել նաև ներքին ինքնավարություն: Դրա վկայությունն է, այսպես կոչված, Քեշիշ - գյոլի ուրարտական արձանագրության մեջ «Տուշպայի որդիներ» արտահայտության առկայությունը, իսկ «որդի» ասելով հասկանում էին քաղաքի լիիրավ քաղաքացիներին: Բուն արձանագրությունը, որը թողել է ուրարտական արքա Ռուսա III-ը՝ Էրիմենայի որդին, վերաբերում է արհեստական ջրամբարի՝ «Ռուսայի ծովի» կառուցմանն ու ջրերը դեպի Տուշպա և Ռուսախինիլի Կիլբանիկայի ուղղելու, հողերը ոռոգելի դարձնելու մասին: Միաժամանակ, արձանագրության մեջ կարծես թե խոսվում է «որդիների» կողմից Ռուսախինիլիի առջև սփռված հողերի մշակության մասին՝ որոշակի վճարի դիմաց[25]:

Պալատական նկարչի տունը

Ընդհանրապես, ոռոգման գործը գտնվում էր պետության վերահսկողության տակ և համարվում էր առաջնահերթ խնդիր: Ուրարտական ջրանցքաշինությունն իր ժամանակաշրջանի շինարարական մտքի գլուխգործոց էր: Մենուա արքան, որը ուրարտագիտության մեծ ռահվիրա Կ. Ֆ. Լեման-Հաուպտի կարծիքով բուն Տուշպա քաղաքի իրական հիմնադիրն էր, կառուցել էր իր անունը կրող, իսկ հետագայում՝ Շամիրամին վերագրված նշանավոր ջրանցքը՝ այս կերպ Տուշպան դարձնելով մեծաքանակ բնակչության համար բարենպաստ և հարմար ջրառատ բնակավայր:

Ջրանցքը սկիզբ է առնում Վերին Մժնկերտի աղբյուրներից, ձգվում մոտ 56 կմ և հասնում Վան՝ ոռոգելի դարձնելով ողջ հովիտը: Ջրանցքն ունի 2.5-ից մինչև 4 մ լայնություն, մոտ 2 մ խորություն, երբեմն 10 մ բարձրությամբ հենապատեր, իսկ ժամանակին Խոշաբ գետը հատել է, թերևս, ջրանցույց (ակվեդուկ) հիշեցնող կառույցով: Ջրանցքը քաղաքին ապահովում է վայրկյանում մոտ 6–10 մ^3 ջրով:

---

[23] *Նույն տեղում, էջ 126-127:*

[24] Ֆ. Տ ե ր - Մ ա ր տ ի ր ո ս օ վ. Раскопки на северном склоне крепости Эребуни. — *Հին Հայաստանի մշակույթը, XIII, Երևան, 2005, էջ 148-149:*

[25] Ն. Վ. Ա ր ա ր տ ի ւ ն յ ա ն. *Նշվ. աշխ., № 391:*

Կ. Ֆ. Լեման - Հաուպտն այս ջրանցքը, որն անցյալ դարի սկզբին հայերն անվանում էին նաև «Ամբարտակ գետոյն», ավելի կատարյալ էր համարում հին արևելյան ջրամատակարարման շատ այլ համակարգերից՝ այն համեմատելով դեռևս Բաբելոնի արքա Համմուրաբիի (Ք. ա. 1792–1750 թթ.) կողմից կառուցված «Մարդկանց երջանկություն» անունը կրող ջրանցքի հետ[26]*:*

Քաղաքային կյանքին զուգահեռ նույնքան սրընթաց զարգանում էր ուրարտական մշակույթը և արվեստը: Արվեստում ձևավորվում է երեք հիմնական ոճ, որոնցից առաջինը պալատական դասական ոճն էր, երկրորդը՝ ավանդական ուղղությունը՝ հիմնված տեղական, ծայրագավառային ավանդույթների վրա, և երրորդը՝ այս երկուսի միաձուլմամբ ձևավորված անչափ հետաքրքիր «սինկրետիկ» արվեստը: Արդյունքում ի հայտ է գալիս ուրույն և կատարյալ մի ճարտարապետություն, որմնանկարչություն, բարձրաքանդակային ու կիրառական արվեստ, քանդակագործություն ու պատկերագրություն[27]*:*

Արվեստագետները երբեմն շեշտում են ուրարտական գեղարվեստի ծայր աստիճանի սրբագործված բնույթը, սակայն վերջին տարիներին շրջանառություն ստացած նյութերը վկայում են, որ այս արվեստին բնորոշ է նաև նուրբ հումորը, ճոխ տոնականությունը, բնանկարը և այլն: Ուրարտուում ձևավորվում են արվեստի այնպիսի ուղղություններ, որոնք մեծ տարածում չունեին Առաջավոր Ասիայում, ինչպես, օրինակ, մոնումենտալ սյուժետային խմբաքանդակն է արձանագործության բնագավառում (այդպիսի օրինակ է Մուծածիրի տաճարում դրված արձանախումբը՝ կազմված Ռուսա I արքայի, նրա մարտակառքի ու կառապանի բրոնզաձույլ արձաններից)[28]*:*

Տուշպան ծաղկում էր, կարճ ժամանակամիջոցում քաղաքն ընդարձակվեց դեպի Վանա ժայռի հյուսիսային կողմը՝ եզերելով Վերին քաղաքն ու միջնաբերդը:

* * *

Ք. ա. 735 թ. ասորեստանյան արքա Թիգլաթպալասար III-ի բանակները ներխուժեցին Ուրարտու: Անցնելով Ջեզիրեն և Սղերդը Վանա լճի հարավային ափերին կապող լեռնային դժվարանցանելի արահետներով՝ ասորեստանյան զորքերը միանգամայն անսպասելի հայտնվեցին Վանա լճի հարավում և արագորեն առաջացան դեպի

---

[26] К. Ф. Леман–Хаупт. Вступительная лекция по истории и культуре халдов.– Труды Тбилисского гос. университета, 1938, № 6, с. 248.

[27] S. G. Hmayakyan. L' Ourartou et son écriture.– Arménie. La magie de l'écrit. Marseille, 2007, p. 19.

[28] F. Thureau-Dangin. Une relation de la huitième campagne de Sargon (714 av. J.–C.).– Textes cunéiformes, t. III, Musée du Louvre. Paris, 1912, p. 63.

մայրաքաղաք: Տուշպան պաշարվեց: Քաղաքի ճակատագրի մասին է խոսում ստորև բերվող տեքստը, որն ասորեստանյան պաշտոնյան ուղղել էր արքային.

«Նախկինում, երբ արքան՝ իմ տերը, գնացել էր (դեպի) Ուրարտու (երկիր), Աշշուրն ու Շամաշը հանձնեցին Տուրուշպա քաղաքը արքայի՝ տիրոջս ձեռքը: Թող արքան՝ իմ տերը, ճանապարհ բռնի դեպի Ուրարտու, թող նրանք *(ասորեստանյան զորքերը)* գրավեն Տուրուշպան: Թող արքան՝ իմ տերը, ընդմիշտ հավերժացնի իր անունը: Գուցե արքան՝ իմ տերը, կրկին ամայացնի […]»[29]:

Տուշպան ավերվեց, սակայն կանգուն մնաց միջնաբերդը, որն ասորեստանյան զորքերն այդպես էլ ի զորու չեղան գրավելու: Երիտասարդ կայսրությունը սկսում է փլուզվել:

Թիգլաթպալասարի արշավանքից ոչ շատ անց ուրարտական արքունիքում իրականացվում է հեղաշրջում: Իշխանությունն անցնում է Ռուսա I-ին (Ք. ա. մոտ 735–713 թթ.), որին և հաջողվում է առժամանակ միավորել երկիրն ու մի նոր պայքար սկսել Ասորեստանի դեմ՝ նրանից առաջնության դափնիները խլելու համար:

Տերությունը նոր էր կազդուրվել այս ցնցումներից, երբ Ք. ա. 714 թ. հյուսիսից Ուրարտու ներխուժեցին կիմերական ցեղերը[30], իսկ հարավից՝ Ասորեստանի Սարգոն II արքան (Ք. ա. 721–705 թթ.): Ռուսան պարտություն է կրում՝ ստիպված լինելով մեկընդմիշտ հրաժարվել մեծապետական ծրագրեր իրականացնելու մտքից:

Ռուսային հաջորդած Արգիշթի II-ի (Ք. ա. 713 – 680՝ թթ.) և հատկապես Ռուսա II-ի օրոք (Ք. ա. 680՝ – 660՝ թթ.) երկիրը վերածնվում է որպես կուռ ու ամուր թագավորություն: Կրկին ծաղկում են ապրում տնտեսությունն ու մշակույթը: Փորվում են նոր ջրամբարներ և ջրանցքներ, կառուցվում ճանապարհներ ու կամուրջներ, հիմնվում են այգիներ, յուրացվում է խոպանը, զարգանում են արվեստը, արհեստները և առևտուրը:

Կառուցվում են նաև նոր քաղաքներ, որպիսիք էին, օրինակ, Թեյշեբայինի քաղաքը (Կարմիր-բլուր), «Ռուսայի փոքր քաղաքը» (Բաստամ), Ռուսախինիլի Էիդուրուկային (Այանց. Էիդուրու լեռան առջևի Ռուսախինիլի. Էիդուրու=Սիփան), Զիուկունի երկրի Խալդիի քաղաքը (Արծկե) և, վերջապես, Ռուսախինիլի Կիլբանիկային (Թոփրաք-քալե): Այս վերջինս հաճախ է դիտվում իբրև տերության նոր մայրաքաղաք: Թերևս Ռուսախինիլիի կառուցմամբ, Տուշպան դարձավ երկկենտրոն մի քաղաք, որպիսին էր օրինակ՝ Արգիշթիխինիլին իր երկու՝ արևելյան և արևմտյան ամրոցներով:

Տուշպայից ուրարտական վերջին արքաների գործունեության մասին ոչինչ հայտնի չէ: Սակայն շնորհազրկված Տուշպային վիճակված էր ունենալ շատ ավելի երկար կյանք, քան տերության նոր կենտրոնները՝ լինի այդ նույն Ռուսախինիլի Կիլբանիկային կամ Ռուսախինիլի Էիդուրուկային, լինի Զիուկունի երկրի Խալդիի քաղաքը Արճեշի մոտ կամ Թեյշեբայինի քաղաքը՝ Արարատյան դաշտավայրում:

---

[29] H. W. F. S a g g s. The Nimrud Letters, 1952.– Cuneiform Texts from Nimrud, vol. V. London, 2001, ND 2673.

[30] А. И. И в а н ч и к. Киммерийцы и Урарту накануне восьмого похода Саргона II.– Вестник древней истории, 1990, № 3, с. 3–19.

* * *

Ուրարտուն կործանվեց: Սեպագիր բաբելոնյան աղբյուրներում դեռևս Ուրաշտու (Ուրարտու) անունով հիշատակվող հայկական թագավորությունը Ք. ա. 547 թ. նվաճվում է պարսկական աշխարհակալ տերության հիմնադիր Կուրաշ (Կյուրոս) II-ի կողմից: Ահա թե ինչ է ասվում բաբելոնյան տեքստում.

«Նիսսան *(I)* ամսին Կուրաշը՝ Պարսու երկրի արքան, իր զորքը հավաքեց և անցավ Տիգրիսը Արբա'իլից ցած: Այար *(II)* ամսին նա [արշավեց] դեպի Ո[ւրաշտու (երկիր)…], պարտության մատնեց նրա արքային, վերցրեց նրա ունեցվածքը, հաստատեց իր կայազորն այնտեղ […]: Այնուհետ արքան և իր կայազորը մնացին այնտեղ»[31]:

«Այնտեղ» ասելով, ամենայն հավանականությամբ, նկատի է առնվում Վանի միջնաբերդը: Այն երբևէ չկորցրեց իր նշանակությունը, և պատահական չէ, որ այստեղ արձանագրություն է կամեցել թողնել Կյուրոսի պարսից պետության ժառանգորդ Դարեհ I աքեմենյանը: Նրա ցանկությունն իրականացրել է որդին՝ Քսերքսես I-ը[32]:

* * *

Վան: Նա Հայաստանի մայրաքաղաքն էր Ք. ա. VI - V դարերում: Ք. ա. IV դարում Հայաստանի Երվանդունի տիրակալները լքում են այն՝ երկրի կենտրոնը տեղափոխելով Արարատյան դաշտ և պետության կենտրոն դարձնելով ուրարտական մեկ այլ քաղաք՝ Արգիշթիխինիլին, որն ուներ նաև մի երկրորդ անուն՝ Արմավիր:

Հելլենիստական դարաշրջանում Վանը դեռևս պահպանում էր իր հին անունը՝ Տոսպ, իսկ «Սասնա ծռեր» էպոսում հիշատակվում է Տոսպան բլուր անվանումը: Ինչոր ժամանակ քաղաքը, թերևս, կոչվել է և Տոսպ, և Վան, որի արդյունքում քաղաքին հարող գավառակը կոչվում էր Վանտոսպ: Արտաշեսյանների օրոք Վանը ինքնավարություն ունեցող քաղաք - պետություն էր, որի տիրակալներից մեկի անունը մեզ հայտնի է իր թողարկած դրամի արամեերեն արձանագրությունից. այն է՝ «Տոսպի

[31] R. R o l l i n g e r. The Western Expansion of the Median "Empire": A Re-Examination.– F. M. Fales (Ed. in Chief), Continuity of Empire? Assyria, Media, Persia, History of the Ancient Near East / Monographs – V, Padova, 2003, p. 314–316 and n. 128.

[32] R. G. K e n t. Old Persian. Grammar, Texts, Lexicon.– American Oriental Series, vol. 33. New Haven, p. 152–153.

Միհրդատ արքա»[33]*: Թերևս պատահական չէ, որ Արևի աստծո այս քաղաքի տիրակալի անունը ևս նշանակում էր Միհրի՝ արևի աստծո տված:*

Վաղ միջնադարում Վանը Ռշտունյաց իշխանության կենտրոնն էր: Ռշտունյաց ազնվականներին անվանում էին վռշիկ և, շատերի կարծիքով, նրանք են հին տուշպացիների ուղղակի ժառանգորդները: Ուշագրավ է, որ հայկական լեգենդները նրանց բնութագրում են որպես ռոմանտիկական սիրահարներ:

ВАН В ДРЕВНОСТИ
(Турушпа, Тушпа, Тосп)

СИМОН АМАЯКЯН, ЕРВАНД ГРЕКЯН

Р е з ю м е

История первой столицы Армении города Ван (Тосп) начинается с III тыс. до н. э. Город Ван в доурартскую эпоху был известным центром почитания солнца в Передней Азии. В эпоху становления Ванского царства (Урарту) он служил основной базой, на которой выросло государство, что выявляется на фоне письменных, археологических и мифологических данных. Самоуправляющийся город имел пространственный облик со сложной структурой, с двумя религиозно-оборонительными центрами на Ванской скале (цитадель города) и Зимзим-даге (Топрак-кале).

VAN IN ANCIENT TIMES
(Turušpa, Tušpa, Tosp)

SIMON HMAYAKYAN, YERVAND GREKYAN

S u m m a r y

The history of Van (Tosp), the first capital-city of Armenia, begins from the 3th Millennium B. C. In pre-Urartian period the city of Van was a well-known cult center of the Sun-God in the Ancient Near East. According to written, archaeological and mythological data, in the period of formation of the Kingdom of Van (Urartu), the city served as a main base, around which was formed the state. The autonomous city had spatial aspect, representing a complex structure with two religious-defensive centers on the Van cliff (citadel of the city) and Zimzim-dagh (Toprak-kale).

[33] *Է. Խ ո ւ ր շ ո ւ դ յ ա ն. Տոսպի արքա Միհրդատի դրամը.– Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, պրակ XVII, Երևան, 1998, էջ 167-174:*